ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 9-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 31.07.2018Թ. ԹԻՎ 7-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ոստիկանության պետի 2018 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի խորհրդականների և օգնականների միջև պարտականությունները բաշխելու վերաբերյալ ցանկը հաստատելու մասին» թիվ 7-Լ հրամանով հաստատված հավելվածի 5-րդ կետում «խորհրդական» բառից հետո լրացնել «՝ Բ. Սեդրակյան» բառերը:

2. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՕՍԻՊՅԱՆ**

«30» 08 2018թ.

ք. Երևան

Հավելված
ՀՀ ոստիկանության պետի
« 31 »--- 07---2018թ.
թիվ----7-Լ հրամանի

Ցանկ
Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի խորհրդականների և օգնականների միջև պարտականությունների բաշխման

1. ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ՝ Գ. Բադիրյան

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 4-րդ և 5-րդ հատուկ գումարտակներում ծառայության ընդունվելու թեկնածուների ընտրություն, նրանց մասնագիտական գիտելիքների ստուգում, ինչպես նաև ծառայողական գործունեության ընթացիկ վերլուծություն:

2. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական՝ Ա. Ավոյան

Ոստիկանության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնելու նպատակով ստեղծված ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի գործառույթների պատշաճ կազմակերպում և իրականացում:

3. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական՝ Գ. Աբովյան

1) «Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ» հասարակական կազմակերպության անդամների և ոստիկանության համակարգի միջև ակտիվ փոխհամագործակցության աշխատանքների կազմակերպում ու վերահսկողություն,

2) ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ծառայողների ընտանիքների, վիրավորված, ինչպես նաև հաշմանդամ դարձած ծառայողների, ոստիկանության վետերանների կենցաղային պայմանների բարելավման ու նրանց աջակցման աշխատանքների կազմակերպում, «Վահան» բարեգործական հիմնադրամի աշխատանքների կոորդինացում:

4. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական՝ Մ. Կիրակոսյան

Ոստիկանության Երևան քաղաքի, մարզային վարչությունների և դրանց ենթակա տարածքային բաժինների, մարզպետարանների և համայնքների ղեկավարների ու ներկայացուցիչների հետ՝ համայնքում առկա խնդիրների քննարկման և դրանց լուծման, ինչպես նաև ոստիկանություն-համայնք փոխհամագործակցությունն ակտիվացնելու և ամրապնդելու նպատակով տեղերում անցկացված հանդիպումների տեսաձայնագրությունների ու արձանագրությունների, ինչպես նաև համայնքային ոստիկանության ծառայության առանձնահատկությունների ուսումնասիրման և ծառայողների շրջանում ոլորտի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների համալրման նպատակով վերոնշյալ

ստորաբաժանումների անձնակազմի հետ անցկացված դասընթացների տեսաձայնագրությունների պարբերաբար ամփոփում:

5. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական՝ Բ. Սեդրակյան

1) ոստիկանության ստորաբաժանումների կողմից հանցագործությունների և պատահարների մասին հաղորդումների հաշվառման, դրանց բացահայտման ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների, նյութերի նախապատրաստման, արարքի քրեաիրավական որակման ընթացքում, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների կողմից ենթադրյալ իրավախախտումների վերաբերյալ նախաքննական մարմիններ ուղարկված նյութերով խնդրահարույց հարցերի քննարկում,

2) նշված հարցերով ոստիկանության ստորաբաժանումներից ստացված համապատասխան փաստաթղթերի ու տեղեկանքների ուսումնասիրությունների և վերլուծությունների կատարում: Հայաստանի Հանրապետության նախաքննական, դատական մարմինների և դատախազության հետ պատշաճ համագործակցության ապահովում:

ՀՀ ոստիկանության պետի խորհրդականները ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնում են առաջարկություններ իրենց համակարգման ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման վերաբերյալ, ապահովում են առանձին հանձնարարականների կատարումը, անմիջականորեն ենթակա և հաշվետու են ՀՀ ոստիկանության պետին:

ՀՀ ոստիկանության պետի օգնականները օժանդակում են ոստիկանության պետի ծառայողական գործունեությանը, կատարում են ոստիկանության պետի առանձին հանձնարարականները, անմիջականորեն ենթակա և հաշվետու են ՀՀ ոստիկանության պետին:

(Հավելվածը խմբագրվել է 30.08.2018թ. թիվ 9-Լ հրամանի հիման վրա)